

Մեր Տէրը « արդարութեամբ արեգակն է »:

Որքան որ մտահոգ ենք Սուրբ Երկրի եւ ամօր դրացի երկիրներու տագնապակից կացութեամբ, նոյնքան կը նմուրսինք մեր սիրտն ու հոգին, ի լուր եւ ի տես քաղաքական եւ տնտեսական այն տագնապամբներուն եւ հոգեխռով ամստուգութեանց համար, որոնց ենթակայ են, որոնց կրակներուն մէջէն կ'անցնինք մեր Մայր Հայաստանը եւ Արցախը, եւ մեր ժողովուրդի զաւակները, որոնք ցրուած են այլեւայլ ազգաց եւ համրապետութիւններու մէջ:

Խաղաղութեամբ եւ արդարութեամբ իշխանին երկրպագու ենք, կէս զիշերուն պաշտամունքի այս պահում, աղօթելով որ մօայլը փարատի, արշալոյսը ծագի, եւ աշխարհի հզօրները պատգամարէր մոգեր դառնան իմաստութեամբ, ազգերու եղբայրութեամբ, Չարին կործանիչ եւ մահաբեր սադրամբները ձախողցնելու, բարութեամբ, մարդկային արժանապատւութեամբ, սերունդներու բարգաւաճմամբ, եւ քաղաքակիրթ աշխարհի հոգեւոր ժառանգութեամբ անուր եւ վայելուր ապահովելու: « Երանի Խաղաղարարաց »:

Աստուածայայտութեամբ տօմը միշտ խորիրգամիշ պիտի մնայ յոյսի, կենսագործ վերանորոգմամբ, եւ անխաբելի ազատութեամբ եւ փրկութեամբ:

Հրեշտակներու փառատրութիւնը եւս բոլորին շրթունքներէն անպակաս պիտի մնայ եւ պիտի հնչէ, երկինքն ու երկիրը, Աստուածն ու մարդերը համայնական մերդաշնակութեամբ մէջ գովերգելով:

« Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ համութիւն »:

ՍՐԲԱՀՈՒՆԶ ԶԱՆԳԱԿՆԵՐ

Սրբահումէզ գամգակներ
Ղօղանջէք անդադրում,
Յուշարար՝ մարդերու
Ըղձամաց անհատնում:

Արիաւիրքն է պատեր
Սրբագործ Քրիստոս—կոխ
Լեռներում ու ծովում
Ու մարդոց սրտերում:

Ե՛տ բերէք հրաշագործ
Ծումէն ու Զայնը Փրկչին,
Որ աշխարհին՝ աչք—աչքի,
Սիրտ—Սիրտի, խաղաղի:

Ղօղանջէ՛ք՝ գա՛մգակներ,
Սրբահումէզ, անդադրում,
Միմէն մարդն լըսէ ձեր
Պատգամներն Յաւերժէն:

ԹԱՄ